

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. մայիսի 13-ից 15-ը Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն)՝  
բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

### 1. ԳՈՐԾՈՂՎԱԾ ԱՆՁ

Էրիկ Գրիգորյան

### 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Բնապահպանության նախարար

### 3. ԳՈՐԾՈՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն)

2019թ. մայիսի 13-ից 15-ը

### 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության  
(UNESCO)

### 5. ԳՈՐԾՈՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի  
կազմակերպության (UNESCO) Զրի միջազգային համաժողովին

### 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զրի միջազգային համաժողովը միտված էր խթանելու  
պետությունների ջրային անվտանգությունը՝ ջրային ռեսուրսների  
միջոլորտային կառավարման միջոցով:

Համաժողովին մասնակցել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ ավելի քան 124  
երկրի պատվիրակություն, 37 երկրի նախարար, ինչպես նաև բիզնես ոլորտի,  
դոնոր կազմակերպությունների և խոշոր գիտական հաստատությունների  
ներկայացուցիչներ: Թեմատիկ նիստերի ընթացքում քննարկվել են  
պետությունների համագործակցության միջոցով ջրային ոլորտի  
կառավարման և ազգային ու միջազգային մակարդակներում կայուն  
զարգացմանն ուղղված միջոցառումները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զրի միջազգային համաժողովի ընթացքում շահագրգիռ  
կողմերը հրավիրվեցին կլոր սեղանի շուրջ անց կացնելու մասնագիտական  
քննարկումներ ջրային ռեսուրսների ղեկավարման և կառավարման  
միջոլորտային մոտեցումների շուրջ, ինչպես նաև առաջարկեցին  
տնտեսական, սոցիալական և էկոլոգիապես կայուն լուծումներ՝ ջրային  
անվտանգությանը և խաղաղությանը նպաստելու համար:

Ներկայացնվեց թափանցիկության և համապատասխան տեղեկատվության փոխանակման մեխանիզմների լավագույն փորձը՝ ջրի ղեկավարման և կառավարման ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև միջոլորտայնության և գիտության ինտեգրման հարցը Կայուն զարգացման նպատակների (SDGs) շրջանակներում, ներառյալ աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ «Սենդայի շրջանակները» և կլիմայի փոփոխության մասին «Փարիզյան համաձայնագիրը»:

Հատուկ ուշադրություն դարձվեց կրթությանը, որպես ջրային կայունության մարտահրավերների լուծման կարողությունների հզորացման կարևոր գործոն:

## **7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆՂԻՊՈՒՄՆԵՐ**

Վերոնշյալ հանդիպման ընթացքում երկկողմ հանդիպումներ են ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի բնական գիտությունների հարցերով տեղակալ տիկին Շամիլա Նայիր-Բեդուելի, որի ընթացքում քննարկել ենք Հայաստանում կենսոլորտային պահպանավայրերի և գեոպարկերի հիմնման գործընթացը:

Երկկողմ հանդիպում են ունեցել նաև Հարավային Կորեայի շրջակա միջավայրի նախարար պարոն Չո Մյունգ-Ռաեի և Պորտուգալիայի Շրջակա միջավայրի և անցումնային էներգետիկայի նախարար Ջոաո Պեդրո Մատոս Ֆերնանդեսի հետ, որոնց ընթացքում դիտարկվել են պետությունների համագործակցության շրջանակներում իրականացվող գործողությունների ընթացքը և նախատեսվող ծրագրերը:

## **8. ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2017թ. «Ջուր և խաղաղություն» զեկույցի Համաշխարհային բարձր մակարդակի խորհրդաժողովի առաջարկությունների հիման վրա ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ջրի միջազգային կոնֆերանսը հանդիսացավ ջրի հետ կապված հարցերի շուրջ քննարկումների համար համաշխարհային բազմակողմանի հարթակ, որի նպատակն էր խթանել միջոլորտային մոտեցումը ջրային ռեսուրսների ղեկավարմանը և կառավարմանը՝ անդրսահմանային մակարդակում: 2030թ. Կայուն զարգացման նպատակների (SDGs) օրակարգի շրջանակներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ջրի միջազգային կոնֆերանսը նպաստեց «Կայուն զարգացման նպատակներ»-ում ջրի դերի բարձրացմանը՝ որպես միավորող տարր:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ջրի միջազգային կոնֆերանսը նպաստեց նաև շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում պանելային քննարկումներ եղան «Զուր և տեխնոլոգիական նորարարություն» և «Զրային քաղաքականության տվյալների հետ կապված որոշումների կայացում» թեմաների շուրջ:

Պանելային քննարկումները հանդիսացան որպես գաղափարների և փորձի փոխանակման հարթակ մասնակիցների համար:

Հանդիպման մասնակիցները տեղեկացվեցին, թե ինչպես են տեխնոլոգիաները լուծում ջրային ռեսուրսների կառավարման մարտահրավերները, ինչպես նաև հնարավորություն ընձեռվեց հասկանալ տեխնոլոգիաների առավելությունները և առաջացող խոչընդոտները:

Քննարկվեցին նաև ջրային ռեսուրսների կառավարման օպտիմալացման հարցերը, ինչպես նաև օգտագործողների համար հարմար տեխնոլոգիական լուծումների հետազոտման և նախագծման զարգացումները:

Հանդիպումը հարթակ հանդիսացավ մասնակիցների համար քննարկելու հետագա համագործակցության և գործընկերության հետ կապված հարցերը:

Բնապահպանության նախարար

Էրիկ Գրիգորյան

X

---